ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2016թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և ելնելով հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներից՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին մոլախոտային բուսականության դեմ պայքարի (այսուհետ՝ պայքար) կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) պայքարի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների (այսուհետ՝ ֆինանսական միջոցներ) ծախսման ուղղությունները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) պայքարի իրականացման պատասխանատուներ են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը (այսուհետ՝ շրջանների վարչակազմեր).

2) պայքարն իրականացվում է օպերատիվ կարգով՝ շուրջ 1625 հեկտար տարածքի վրա:

3. Ֆինանսական միջոցները հատկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից:

4. Շրջանների վարչակազմերին՝ պայքարի ավարտից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, նախարարություն ներկայացնել տեղեկություններ՝ Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության տարածքում գործող մեքենատրակտորային կայանների կամ անհատ մեխանիզատորների հետ կնքած ծառայությունների մատուցման պայմանագրերի վերաբերյալ:

5. Նախարարությանը և ծառայությանը՝ պայքարի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ գործողությունը տարածվում է 2016 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին ցանքատարածքներին հարակից հրդեհավտանգ տարածքներում և դեպի ցանքատարածքներ տանող ճանապարհների եզրերին առատ տեղումների հետևանքով փարթամորեն աճած մոլախոտային բուսականության դեմ պայքարի (այսուհետ՝ պայքար) կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում է պայքարի կազմակերպման աշխատանքները:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը կազմակերպում է հերբիցիդի սրսկման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ջրի տեղափոխումը համապատասխան տարածքներ և այլ անհրաժեշտ աշխատանքներ:

4. Նախարարության <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) մասնագետների կողմից պայքարի իրականացման ողջ ընթացքում կատարվում են հրահանգավորման և մոնիթորինգի աշխատանքներ:

5. Պայքարի իրականացման համար անհրաժեշտ հերբիցիդի, անհատական պաշտպանության միջոցների, վառելիքի և այլ նյութերի ձեռքբերումն իրականացնում է նախարարությունը, իսկ դրանց տրամադրումն իրականացվում է կազմակերպության միջոցով:

6. Նախարարությունը հերբիցիդի սրսկման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերին՝ հիմք ընդունելով նրանց և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող մեքենատրակտորային կայանների կամ անհատ մեխանիզատորների հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերը:

7. Հերբիցիդի սրսկումների արդյունքում հրդեհավտանգ տարածքները պետք է բաժանվեն առանձին հատվածների, որը հնարավորություն կստեղծի հնարավոր հրդեհները տեղայնացնել և մարել նվազագույն ֆինանսական միջոցներով ու մարդկային ռեսուրսներով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ *Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի __________ ___-ի
N ______ -Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Անվանումը	Հերբիցիդի ձեռքբերում		Հերբիցիդի տրամադրում (լիտր)	Սրսկվող տարածքը		Անհատական պաշտպանության միջոցների, վառելիքի և այլ նյութերի, աշխատողների ձեռքբերման համար	Ընդամենը պահանջվող գումար (հազար ՀՀ դրամ)
		Քանակը (լիտր)	Արժեքը (հազար ՀՀ դրամ)		Մակերեսը (հեկտար)	Արժեքը (հազար ՀՀ դրամ)		
1	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	6500,0	19500,0				1500,0	21000,0
2	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն						2000,0	2000,0
3	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> ՊՈԱԿ						1000,0	1000,0
4	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմ			1000,0	250,0	1125,0		1125,0
5	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմ			800,0	200,0	900,0		900,0
6	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմ			1000,0	250,0	1125,0		1125,0
7	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմ			1200,0	300,0	1350,0		1350,0
8	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմ			1200,0	300,0	1350,0		1350,0
9	Պահուստ			1300,0	325,0			
ԸՆԴԱՄԵՆԸ		**6500,0**	**19500,0**	**6500,0**	**1625,0**	**5850,0**	**4500,0**	**29850,0**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Սույն նախագծի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին ցանքատարածքներին հարակից հրդեհավտանգ տարածքներում և դեպի ցանքատարածքներ տանող ճանապարհների եզրերին առատ տեղումների հետևանքով փարթամորեն աճած մոլախոտային բուսականության դեմ պայքարի կազմակերպման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Որոշման նախագծի խնդիրն է հերբիցիդի սրսկումների արդյունքում հրդեհավտանգ տարածքները բաժանել առանձին հատվածների, որը հնարավորություն կստեղծի հնարավոր հրդեհները տեղայնացնել և մարել նվազագույն ֆինանսական միջոցներով ու մարդկային ռեսուրսներով:

Կարգավորման նպատակը և բնույթը

Ներկայացված նախագծի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին ցանքատարածքներին հարակից հրդեհավտանգ տարածքներում և դեպի ցանքատարածքներ տանող ճանապարհների եզրերին առատ տեղումների հետևանքով փարթամորեն աճած մոլախոտային բուսականության դեմ պարքար կազմակերպելու միջոցով կանխել հրդեհների բռնկումը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության և իրավաբանական բաժինների կողմից:

Սպասվելիք արդյունքները

Նախագծի իրականացումից ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին ցանքատարածքներին հարակից հրդեհավտանգ տարածքներում և դեպի ցանքատարածքներ տանող ճանապարհների եզրերին առատ տեղումների հետևանքով փարթամորեն աճած մոլախոտային բուսականության դեմ պարքար կազմակերպելու միջոցով հնարավոր հրդեհները տեղայնացնել և մարել նվազագույն ֆինանսական միջոցներով ու մարդկային ռեսուրսներով:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին մոլախոտային բուսականության դեմ պայքար կազմակերպելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է հանրային քննարկումների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին մոլախոտային բուսականության դեմ պայքար կազմակերպելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին մոլախոտային բուսականության դեմ պայքար կազմակերպելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին մոլախոտային բուսականության դեմ պայքար կազմակերպելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին մոլախոտային բուսականության դեմ պայքար կազմակերպելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
4. ԼՂՀ պաշտպանության նախարարություն
5. ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն
6. ԼՂՀ շրջանների վարչակազմեր
7. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության

Նախագիծը պատրաստողը՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին

_____ ***Վ. Ավետիսյան***
(ստորագրությունը)

«____» _____ 2016 թ.